

## ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

### ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ 1885 թ. ՄԻ ՎԱՎԵՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսը (կյշ. 1866-1882 թթ.) նախանձանմադիր հայ եկեղեցական ունեցվածքի և շահերի պաշտպանությամբ, գործուն քայլեր է ձեռնարկում վաճառապատկան մի շարք կալվածքների, որոնց տարրեր միջոցաւով տեր էին դարձել ինչ-ինչ մարդիկ և խաշնարած օտարները, վերադարձնելու այդ վաճեցերին:

Նման ծանր վիճակում էին գտնվում նաև Գուգարք աշխարհի՝ Աղատուի հովտի պատմական վաճեցերը՝ Գոշավանք, Հաղարծին, Մակարավանք և այլն: Հիշյալ վաճեցերի կալվածքների վերադարձման, բարեկարգման և հոգևոր կյանքը վերականգնելու խնդիրը իրականացնելու նպատակով Կաթողիկոսը ձեռնարկում է գործական քայլեր՝ այդ նպատակով ընդգրկելով մի շարք հետինակավոր հոգևոր և աշխարհիկ անձանց: Նոր Գետիկ-Գոշավանքի տեսուչ է նշանակում իշխան Վախթանգ Փարսադանահիմ<sup>1</sup>, Հաղարծին վաճրում է շմիհածնի միաբանության և Սինոդի անդամ Պողոս վարդապետ Տեր-Սարգսյանիմ<sup>2</sup>, իսկ Մակարավանքում Գրիգոր Տեր-Գրիգորյանիմ<sup>3</sup> «Արդար Վարդան» մականունով<sup>4</sup>:

Գործնականում, նրանց կողմից տվյալ խնդիրի իրականացումը հանդիպում է լուրջ խոչընդոտների: Սակայն համառ պայքարից հետո գործը հաջողվում է զույն բերել միայն Հաղարծին վաճքի վաճառիրը: Նա ոչ միայն կարողանում է սրբավարից դուրս վզնել քոչվոր խաշնարածներին, այլև երկարատև համառ, հետևողական և ջանադիր աշխատանքի շնորհիվ ստեղծել վաճքի հետագա գործունեությունը ապահովող անհրաժեշտ միջոցներով հագեցած մի տնտեսություն, բարենորոգում շինությունները, նոր շունչ հաղորդում եկեղեցական կյանքին:

Ասվածի հավաստումն են՝ Ժամանակի պարբերականներում տպագրված բազմաթիվ հոդվածները և հանրաճանաչ մտավորականների կարծիքները (Ուաֆայլ Պատկանյան, Ալեքսանդր Երիցյան, Սիմոն Աբամելիք Լազարյան, Մակար Բարխուդարյան և ուրիշներ), բազմաթիվ արխիվային նյութեր:

Կարևոր և ուշադրության արժանի փաստաթուրը է ՀՀ ՊՊԿԱ-ի վավերագիրը, որի մասին ցանկանում ենք խոսել: Այն կազմված է վաճառիր օրոք, 1885 թվա-

<sup>1</sup> Մետրով Սմբատյան, Տեղագիր Գեղարքունիք ծովագարդ գավառի, որ այժմ Բայազետ գավառ, 1905, էջ 170-178: ՊՊԿԱ, ֆ. 57 գ. 2, գ. 2085:

<sup>2</sup> Նույն տեղում: ՊՊԿԱ, ֆ. 56, գ. 5, թղթապանակ 60, գ. 218, էջ 454:

<sup>3</sup> Մատևանադարան, կաթողիկոսական գոմոց, գ. 19, վավերագիր 152, թղթ. 230, 259, թղթ. 232 և 260:

կանին, և ցուց է տալիս մախորդած 22 տարիների աշխատանքի ընթացքում վաճառիր կողմից ձեռք բերած և ստեղծած եկեղեցական մասունքների, գրչագորերի, զյուղատնեսական աշխատանքների պարագաների, շինարարական գործիքների, կենցաղային իրերի, բնակելի շինությունների, խաշինքի, գոմերի և այլ օժանդակ կենսական միջոցների՝ ութ թերթերի վրա արձանագրված շուրջ 290 անուն ունեցվածքը «Սեպհականութիւնը Սուրբ Աստուածածին վահից ՀԱՂԱՐԾՆԻ»,<sup>4</sup> որում արտացոլվել է Հաղարծնի վանահայր Պողոս վարդապետ Տեր-Սարգսյանի (1863-1896 թթ.) 22 տարիների անդադրում և հետևողական եկեղեցաշեն ու հոգևոր գործունեությունը: Վավերագիրը թեև անստորագիր է, և չի նշվում դրա կազմելու աղիքը, սակայն այն շատ արժեքավոր է:

Արձանագրված իրերի բազմաբնույթ և մեծաթիվ լինելը զարմանք է պատճառում, թե Հայր Սուրբը այդ նժկարին ժամանակներում, ինչպիսի շանքերի գործադրումները է կարողացել ստեղծել, ձեռք բերել այս ամենը և դրա հետ մեկտեղ շրջակա զյուղերի բնակչության շրջանում հոգևոր քարոզչություն կատարել, հորդորել հրանց դպրոցներ հիմնելու, հող մշակելու, շինարարական աշխատանքներ իրականացնելու, քայլայված եկեղեցիները բարեկարգելու համար միջոցներ հայթայթելու և այլն<sup>5</sup>:

Փաստաթղթում արձանագրված իրերը խմբագրված, համակարգված, անվանակոչված և գրանցված են յուրաքանչյուրը համապատասխան խորագրի ներքո.

## Ա - ՍՈՒՐԲ ՄԱՍՈՒԻՆՔ

-Մի արծաթեայ ոսկեզօծ ձեռաց խաչ, յորում գետեղին ի միջնակետին մասն Կենաց փայտի, ի չորս անկիւնս թերոց ի ներքոյ հասարակ քարանց մասունք Սիրոց Առաքելոցն Թաղէտոսի ու Բարդուղիմէտոսի, Ս. Լուսաւորչի և Թէոդորոս զինաւորի՝ ընծայեալ ի Գէորգ եպիսկոպոսէ Վեհապետեանց - 1 հատ:

-Մի արծաթեայ մեծադիր չիտիի խաչ, յորում գետեղի մասն Կենաց փայտի, մի երեսն ոսկեզօծ, ունի յիշատակարան անվերծանելի, ընծայող ի Մատթէոս եպիսկոպոսէ ՎԵՀԱՊԵՏԵԱՆՑ 8 - մեկ հատ:

-Մի Տապանակեայ արծաթեայ տուփի ի միջակետէն հասարակ դեղնագոյն քար, յորում գետեղն մասունք Ս. Թակովքայ Մծբնայ հայրապետի, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ, Առաքելոցն Թակովքայ Տեառներօր, Գէորգայ զօրավարին և Ս. Ստեփանոսի, Առևէ Թովհաննեն եպիսկոպոսի ԱՍԼԱՆԵԱՆՑ 8 - մեկ հատ:

-Մի փոքրիկ խաչ արծաթեայ չիտիի չի, ի ծայր որոյ շղթայակապ, միւս ևս փոքրիկ խաչ ոսկեզօծ, յառաջնուն մասն Ս. Մինասայ և յերկրորդուն Ս. Թովհաննու Մկրտչի ի չորս անկիւն կանաչ քարինք, ի չորս ճաճանչ անթուս քարիւք - նուիրեալ ի Գրիգոր եպիսկոպոսէ Թովթեանց:

<sup>4</sup>ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, գ. 87, գ. 18, տնտեսական բաժին:

<sup>5</sup>Տե՛ս «Հջմ իածին» ամսագիր, 1993, № Դ-Ե-Զ:

-Մի արծաթեայ լեռսայ խաչ ուկեզօծ չիբիւրեմայ, յորում գետեղի մասն անյալու սրբոյ, չորս թերթ սեղեան քարամբը զարդարեալ, նուէր ի Թաղէոս եպիսկոպոսէ Զիւմական - մեւ հատ:

Երկրորդ՝ «Զարդ և անօթեղէնք» մասում արձանագրված են ուխտավորների, քահանաների, վարդապետների, իշխանների, եպիսկոպոսների կողմից վաճքին նվիրաբերված տարբեր տեսակի և չափսի արծաթյա սրբապատկերներ, կանթեղներ, խաչեր, քշոցներ բրոնզյա, եպիսկոպոսական, հովվական զավագաններ, երեք փրկչական պատկերներ «ի ճակատ երկուց խորանաց, յորոց մին թաղման»՝ նվիրված Միսիթար Գոշի վաճքի վերատեսուչ Վահաթանգ Փարսադայանի կողմից, հասարակ աշտանակներ 10, երկու փոքրիկ ջամեր «նուէր Մակար արքեպիսկոպոսի»՝ Վրաստանի առաջնորդից, մի զոյզ զանգակ փոքրիկ «ի մէջ եկեղեցւոյ, մի զոյզ ևս մեծ ի զանգակատան լիշտատակ Յովհաննէս Մամիկոննանց», զմբեթի խաչ, նոյն Մամիկոնյանից «սկիի արծաթեայ ոսկեօծ մաղզմաի, հանդերձ գեղեցիկ շենք Մուկուայի, Մասմատուի արծաթեայ» և այլն:

«Զգեստը» խորագրի ներքո արձանագրված են մի շարք տարբեր գույնի, արծաթյա զառատիա շուշառուներ, զառ տիպի սեղանի վեց սփոռուներ, տարբեր սաղավարտներ, թաշկինակ Ավետարանի, խաչի, քող զավագանի, ժամհարի գոտի, շապիկ, թաշկինակ, հողաթափ, թենոց, քող սկիիի, Ավետարանի, զավագանի, ուրարք գումազգոյն զառ տիպի հնը հատ և այլն:

«Եկեղեցական գրեանք» և «Զանազան գրեանք» բաժիններում թվարկվում են վանքում պահվող գրքերը:

Բնականաբար անհամեմատ ավելի մեծ կարևորություն է ներկայացնում «Գրչագիրը» բաժինը, ուր թվարկվում են վանքում պահվող հետևյալ ձեռագրերը. «Կանոնագիրը մեծ և փոքր, երկու օրինակ, Աւետարան մագաղաթեայ գրեալ ի Բոնակօթ Սիւնեաց աշխարհի մի օրինակ, Հրահանգ քրիստոնէի մի օրինակ, Պորփիրի գրոց լուծունք մի օրինակ, Գիրք աստիճան տալոյ մի օրինակ»:

Է-ից ԺԸ բաժիններում թվարկվում են վաճքի ունեցվածքը ներկայացնող առարկաներն ու կահիկարասին: Հաղարծնի վաճքի ժամանակի վարչական համալիրի մասին պատկերացում կազմելու տեսանկյունից բավականին հետաքրքիր է ցուցակի վերջին՝ «Ծինուածք» բաժինը, որում թվարկված շինություններից այսօր շատ բան չի պահպանվել: Հստ այս ցուցակի, վաճքն ունեցել է հետևյալ շինությունները.

-Մի քարակիր տուն վերնայարկն ստրապիլով, բաղկացեալ ի միոյ հախասեանեակէ եւ ի չորից սեմեակաց, իսկ ներքնահարկն կալապան, կից կալապանին ևս մի փոքրիկ կալապան:

-Մի տնտեսատուն, երկու սեմեակօթ, փոռվ հացի եւ չարտախով, տանիքն միոյ սեմեակ հասարակի:

-Երկու խոր ստրապիլով՝ նորոգեալ, մի ճամճանոց քարուկրեայ - կրից, կից որոյ մի սեմեակ հասարակի:

-Փեթակը մեղուաց. լի վաթսուն փեթակը, դատարկ եօթ:

- Վեց գոմանց:
- Մի մեծ մարագ:
- Մի ջրաղաց:
- Երկու զոյգ ջրաղացի քար:
- Մի վրան տախտակաշէն և տախտակամած:
- Շամապարհը 4000 սանժէն:

Ամփոփելով վերը թվարկվածը, ընդգծննք, որ սույն վավերագիրը, որպես մի կարևոր փաստաթուղթ, ամփոփելով Անդրկայացնում է Հաղարծին սրբավայրի վերակենդանացման գործունեության ուղղված ազնիվ հոգևոր այս առաջնորդի հախորդ 22 տարիների համար աշխատանքի շնորհիվ ձեռք բերված հաջողությունները, ցավոք որը չի հաջողվում կատարել Մինիթար Գոշի վերատեսուչ Վահագանակ Փարսադանյանին և Մակարավանքի վաճառիչը Տեր Գրիգորին, որը սպանվում է օտարների ձեռքով։

Իրու շարադրվածի հավելում պետք է ընդգծել, որ վաճառիչը Տեր Պողոս Մարգարյանը չի սահմանափակվում ձեռք բերածով, ինտևողական պայքար է ծավալում վաճքի իրավունքները նրա կալվածքների նկատմամբ վերականգնելու հարցում։ Թեև նրան չի հաջողվում դատարանների միջոցով վերականգնել այդ իրավունքները, բայց և այնպես որոշում և մեկնում է Սամկո Պետերբուրգ, որտեղ ինը ամիսների շաբաթից ինտո Կարապետ Եզյանի աշակցությամբ, սենատի միջոցով վերականգնում է կալվածքների 700 դեյսատին հողատարածքների նկատմամբ այդ իրավունքները, որոնցից ստացվող եկամուտներով ցանկանում էր նաև այլ բարենորդումներ ձեռնարկել։

Այդահույս, նրա տասնամյակների պայքարը պսակվում է հաղթանակով և վերականգնվում է արդարությունը։ Սակայն Սամկո Պետերբուրգից վերադառնալուց հետո, ցավոք, 1896 թվականի նոյեմբերի 2-ին Էջմիածնում վախճանվում է տիֆից։

Արծևորելով Հաղարծնի վաճառիչը Պողոս վարդապետի 34 տարիների (1863-1896 թթ.) գործունեությունը, նրան նվիրված հիշատակի խոսքում «Արձագանք»-ում ասվում է. «Ով ՏՈՆԵԼԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՔՈ ՀԻԾԱՏԱԿԸ ԵՐԲԵՔ 2Ի ԹԱՌԱՄԻԼ, ԴԱՐԵՐ ԿԱՆՑՆԵՆ, ԱՇԽԱՏԱԿ ԿԻՄԱՆՍ, ՈՐ ԿՈՉՄԱՆԴ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾ ԵՍ ԿԱՏԱՐԵԼ»<sup>6</sup>։

Այսօր ցանկալի է այդ նվիրյալ վաճառիչը անունը վեր հանվեր և հիշատակվեր իր կողմից վերակենդանացրած Հաղարծնի վաճքի վեմերից մեկին, որը և կիանոիսանար մեր հարգանքի արտահայտությունը այդ ազնիվ հոգևոր սպասավորի հիշատակին։

<sup>6</sup> «Արձագանք», № 131, նոյեմբեր, 1896 թ.։